

նգոր բանադրանքներու պէս «տպագրական տետր» Բեմայի վրայ կարդացուած : — Տպագրական գործունեութեան այս խօշարչաւ փառքին մէջ՝ առատօտէն մինչեւ իրիկուն , գիշերն ի բուն իր «քացա»ին առջեւ արձանացած հեք գրաշարն է այս անգամ որ կը ցցէ գլուխ , իր օրավարձքին բարձրացման ակնդէտ : Գործաւորներ կը խմբուին և խորհրդակցութիւններ կը կատարեն **Գրաւարաց խնայողական սնունդի** մը կազմութեան համար : Այդ տարտամ և դետաւան ամուլ փորձերու միջոցին է որ Պօլիս կու գայ «սօցիալ-տեմօքրատ» ԳԱՐԵԳԻՆ ԿՕԶԻԿԵԱՆ (Շապին), ծանօթ ի Կովկաս բանօր դասակարգի մէջ ունեցած գործունեութեամբ և իր կարգ մը նրատարակութիւններով (կենսագրութիւն տե՛ս «Ամենուն Տարեցոյցը , 1910 տարի»), և կը ձեռնարկէ հիմնել **Օսմ. սպարաւական բանօրներու արհեստակցական միութիւն** մը որուն մէջ պիտի մտնէին բաց ի գրաշարներէ՝ տպարանի այլ ձիւղերու գործաւորներն ալ : Կարգ մը ժողովներու մէջ — որոնց ներկայ եղած էին հայ և բուրք աշխատաւորներ — Գարեգին բացատրելով բանօրական միութեան կարեւորութիւնը՝ կըցաւ ընդունիլ տալ անոնց այդ միութեան ծրագիրը որուն **կանոնագիր**ն ալ 2 շեգունելով խօյն լոյս ընծայեց «Կիլիկիա» տպարանէն : — Մեծ Նոր խան սենեակ մը կը վարձուի՝ իր կեդրոնավայր հայ գործաւորներու , սենեակ մըն ալ Պապը Ալիի դիմաց՝ բուրք գործաւորներու , ու քիչ առնեն անդամներու թիւը մեկ քանի հարիւրի կը հասնի : Գրամագուլը կ'սկսի աճիլ և Միութիւնը հեղինակութիւն մը կը վայելէ գործաւորներու և գործատերերու կողմէ : Աշխատանքի ժամերը 10-12 են 8 ի կ'իշխուցոյն , վարձքերը



Գ. ԿՕԶԻԿԵԱՆ

կը կրկնապատկուին , երկուստեք յարուցուած խօջրնդոտներ կը հարբուին և համանուն Միութիւնը մեծ բախով կը շարունակուի մինչեւ 31 Մարտ 1909՝ Յետադիմական Շարժում . և ահա անգործներուն թիւը կ'աւելանայ , Միութեան օրինաց դեմ շարժողներ երեսան կ'ելլեն , որով՝ տպարանատէրեր աստիճանաբար կ'սկսին ձնչել վերտին բանօր դասակարգը՝ սահմանափակելով անոր ձեռք բերած իրաւունքները : Միութիւնը մեծ դժուարութեամբ կը շարունակէ իր գործը , ստիպուելով անձկացունել իր գործունեութեան սահմանը : Կարեւոր դեր կը խաղան անդամներն Քաղաք Մատրեսեան , Մկրտիչ Դանիէլեան , Ֆ. Ճարեան , Զենօր , Արմ. Գառնիկեան և այլք : Կոզիկեան այսպէս հիմնադիրն ու գեղավարը եղած է գործին , նախագահն ու քարտուղարը մնալով միանգամայն , յետոյ երկար առնէ խորհրդատու , մինչեւ որ ուրիշներ կարող եղած են իրենց գործերն իրենք վարելու :



156. Օսմիկ Արզուման — Ազատութենէն օգտուելով՝ առնկերու պէս բուսնող , սակայն շատը կարճատեւ կեանք ունեցող հայ տպարաններու շարքին մէջ ամենէն փայլունը , կարկառունն ու անխախտը կրնայ սեպուիլ Օ. ԱՐԶՈՒՄԵԱՆ անունամբ Յակոբեան խանի վերնայարկը 1908 Նոյեմբերին բացուող այս գործատունը , ճիշտ հո՛ն ուր առնեաք իրենն էր հիմնած մեծատուն տպագրիչը Ճ. Արամեան , պօլսահայ տպարանական աշխարհը յեղաշրջելով : — Մատրեսեանի և Տէր-Ներսէսեանի նման՝ Արզուման նշանաբան բրած է իրեն մաքուր , արագ և առատ գործ , գլխաւորաբար ոյժ տալով Պալէսցի , Գրքնեանի և այլոց գաղափարներուն նրատարակութեանց : Պալիկուց արուեստին սերն ունեցող այս երիտասարդ տպագրիչը մեր քեչադրութեամբ գիրի առատ հետազայ իր ինքնակենսագրութիւնն ուր կը պատահինք շահեկան դրուագներու . « . . . Մեր 400ամեակին առթիւ իմացայ թէ երկ մը պատրաստած էք՝ անոր մէջ խառցունելով ինչ որ կը վերաբերի Հայ Տպագրութեան . ասիկա ծանր գործ մը կը նկատեմ գոր ձեզի պէս մեկը միայն պիտի կրնար գլուխ հանել , ծանօթ ըլլալով ինձ՝ համբերատար և անձանձիր աշխատութիւնիդ : Զեր գործով վերանստու պիտի ըլլանք թէ ի՛նչ դիմաւելումներ ունեցած է մեր տպագր. աշխարհն անցեալին ու ներկայիս մէջ : — Ծնած եմ 1 Մարտ 1880 ին՝ 12 տարեկանիս՝ գրաշար ըլլալու համար մտած եմ Պօլսահայ տպարան ուր աշակերտած եմ